

1848

1948



ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ՄԱՆՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 16-ին տեղի ունեցավ հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Արովյանի մահվան 100-ամյակը նշանավորող ռեսպուբլիկական հոբելյանական հանձնաժողովի հերթական նիստը:

Հանձնաժողովը հաստատեց Խ. Արովյանի կյանքի, գործունեության և ստեղծագործության մասին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Մոլոտովի անվան Պետական համալսարանի և Հայպետհրատի կողմից հրատարակվող գրականության վերջնական պլանը:

Հոբելյանական օրերին լույս կտեսնեն Խաչատուր Արովյանի երկերի ակադեմիական ութ հատորանոց հրատարակությունից ևս երեք հատոր: Առանձին ժողովածուով հրատարակվում են մեծ գրողի մանկավարժական հոդվածները:

Նախատեսված է հրատարակելու Խ. Արովյանի վերաբերյալ գիտական հետազոտությունների, մենագրությունների, պոպուլյար բրոշյուրների ժողովածու: Մասնաշաղկան ընթերցողի համար հայերեն և ռուսերեն լե-

զուններով հրատարակվում է «Վերք Հայաստանի» վեպի կրճատ վարիանտը: Այդ վարիանտի վրա աշխատում են գրողներ Ստ. Զորյանը, Է. Քոչարը և Գ. Արովը:

Հանձնաժողովը հավանություն է տվել ռուսերեն լեզվով «Վերք Հայաստանի» վեպի ակադեմիական հրատարակությանը, որն ունենալու է առաջաբան ու մեկնաբանություններ և լույս է տեսնելու Ս. Շերվինսկու թարգմանությամբ:

Արևիկյանի անվան Գրականության ինստիտուտին առաջարկվել է շտապեցնել Արովյանի երկերի վերաբերյալ նյութերի ու տող առ տող թարգմանությունների ուղարկումը եզրաչրական ռեսպուբլիկաներին:

Հանձնաժողովը հաստատել է Քանաքեռում գրողի Տուն-թանգարանի վերակառուցման և նրան կից տերիտորիայի բարեկարգման պլանը:

Վերակառուցման նախագիծը կազմել են ճարտարապետներ Է. Դավթյանը, Կ. Մանուկյանը և Պ. Թումանյանը:



Խաչատուր Արովյանի Տուն-թանգարանը Քանաքեռում, որտեղ ծնվել ու իր մանկությունն է անցկացրել մեծանուն գրողը, վերջին ժամանակներս շատ է քակուրսանում և նրան այցելում: Այս տարվա երեք ամսում միայն Տուն-թանգարանը այցելել են 15 հազար մարդ:

Ներկայումս մեծ աշխատանք է տարվում Տուն-թանգարանը ընդարձակելու և նրան

կից տերիտորիան բարեկարգելու համար: Տուն-թանգարանի բակում նոր ծառեր են տնկվում, ծաղկանոց պատրաստվում: Տեղական տուֆից բակում կառուցվելու է քարաշեն կամար և երկու հանգստավայր. երկու աղբյուրներ են կառուցվում բազալտից՝ գեղարվեստորեն ձևավորված: Ասֆալտապատվելու և կանաչազարդվելու է դեպի Տուն-թանգարանը տանող փողոցը:



Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյա-
կի առթիվ արծաթագործ վարպետ Վահան
Հացագործյանը մարմարյա տախտակի վրա
արծաթից պատրաստել է թանաքամանի
սարք՝ թանաքամաններ, գրչակոթ և այլն։
Այս բոլորը հյուսված է արծաթից և ձևավոր-
ված է հայկական մանրանկարչության գեղե-
ցիկ օրնամենտներով։ Թանաքամանի հենա-
րանը կաղմում է արծաթյա հյուսվածք՝
զարդարված ակներով, իսկ կենտրոնում՝

Խաչատուր Աբովյանի պորտրեն, դարձյալ
արծաթից պատրաստված։ Այս աշխատանքը
Հացագործյանը հանձնել է Հայկական ՍՍՌ-
Մինիստրների Սովետին կից Արվեստի Գոր-
ծերի Վարչության ժողովրդական Ստեղծա-
գործության Տանը՝ կիրառական արվեստի և
կերպարվեստի ինքնու վարպետների Մոսկ-
վայում կազմակերպվելիք համամիութենա-
կան ցուցահանդեսին ներկայացնելու հա-
մար։



Ժողովրդական ստեղծագործության հայտ-
նի վարպետ-փորագրիչ Ղուլարյանը սպիտակ
ակրիլատից պատրաստել է Խաչատուր Աբով-
յանի «Վերք Հայաստանի» գրքի մակետը՝
մեծ չափերով։ Նրա վրա մի քանի շարքերով

բարձրանում են գեղարվեստորեն պատ-
րաստված սյուներ, որոնց վրա դրված է մե-
ծանուն գրող Խաչատուր Աբովյանի արձանը՝
նույնպես ակրիլատից պատրաստած մեծ
վարպետությամբ։



Մեծանուն գրող Խաչատուր Աբովյանը եր-
կար տարիներ ապրել է Թիֆլիսում. դեռ 20-
ական թվականներին նա այստեղ սովորում
էր։ Այնուհետև նա կրկին Թիֆլիս է վերա-
դառնում 1837 թվին և մնում այնտեղ մինչև
1843 թվականը, երբ ծառայության գործով
երևան է տեղափոխվում։

Ռուս-պարսկական և ուս-տաճկական պա-
տերազմների նախօրյակին Աբովյանը գտնը-
վում էր Թիֆլիսում։ Նա ականատես եղավ
Հայաստան ուղևորվող ուսական զորքերի
կազմավորմանը։ Հայ ժողովրդի փրկությանը
պարսկա-տաճկական դարավոր լծից նա
տեսնում էր Ռուսաստանում և իր ողջնչված
երկում արտացոլեց նա այդ։ Վրաց Հերակլ
երկրորդ արքայի մասին եղած ժողովրդական
ավանդությունների և ասուլիների անմիջա-
կան ապավորության տակ Աբովյանը գրում
է իր սքանչելի բանաստեղծությունը՝ «Քաջ ու
հզոր Հերակլ արքայի վերջին հրածեղտը»։

Վրացական ՍՍՌ Պետական Արխիվում
պահվում են Աբովյանի կյանքի թիֆլիսյան
շրջանին վերաբերող շատ փաստաթղթեր. դը-
րանք Աբովյանի ձեռքով գրված ու նրա կող-
մից ստորագրված գեկուցագրեր, հաշվե-
տվություններ, ուսումնարանի հաստիքային
տեղեկագրեր, ուսումնական պլաններ և ար-
տահայտված կարծիքներ են։

Աբովյանը Թիֆլիսում ապրել է մի շրջա-
նում, երբ դեռ չէր լսել պատերազմի
որոտը։ Անկասկած, Աբովյանը անձամբ
ճանաչում էր Հերակլի ուղղակի գոր-
ծունեության շատ ակնատեսների, Հե-
րակլի, որը Վրաստանի փրկությունը
տեսնում էր Ռուսաստանի հետ միա-
ցման մեջ։ Ի պատիվ Հերակլի Աբովյանի գը-
րած թե արձակ և թե չափածո երկերը ունեն
խիստ ու առնական ոճ։

Մրանք արտացոլում են Աբովյանի նվիր-
վածությունը ժողովրդական լուսավորության
գործին, նրա անձուրբաց ու հետևողական
պայքարը պատանեկության ազատ կրթու-
թյան ու դաստիարակության համար։ Այս
փաստաթղթերի մի մասն արդեն հրատա-
րակվել է։

Աբովյանի Վրաստանում գտնվելու հուշար-
ձան է հանդիսանում նաև «Մթածմինդի տո-
նի» առթիվ 1840 թվին գրած նրա մի երկը։

Աբովյանի չհրատարակված փաստաթղթե-
րը տեղ են գտել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի
«Նոր նյութեր Խաչատուր Աբովյանի մասին»
գրքի մեջ, որը պատրաստ է տպագրության
համար։

Պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Քեկը վրացերենի է
թարգմանել Աբովյանի «Հազարփեշեն»-ը. Ա-
բովյանի մի շարք այլ երկեր թարգմանում է
դոցենտ Շիլակաձեն։

Թիֆլիսում ապրելով Աբովյանը հնարավո-
րություն է ունեցել շփվելու ուս հառաջադեմ
գործիչների և վրացական ու ադրբեջանական
ժողովրդների առաջավոր ներկայացուցիչնե-
րի հետ։ Հայտնի է նրա բարեկամությունը
ադրբեջանական մեծ պոետ ու մտածող Միր-
զա Ֆաթալի Ախունդովի և ադրբեջանցի
պոետ Միրզա Շաֆիի հետ։

Հրատարակվում է Աբովյանի «Թուրքի աղ-
ջիկը», որը վրացերենի է թարգմանել դոցենտ
Բեղլարովը։